ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ (24 ապրիլ 1983 թ.)

Հայ ժողովուրդը տարվա 365 օրերի մեջ ունի մի նվիրական, մի անմոռաց օր, օր աղոթքի և ուխտի: Այդ օրը ապրիլի 24-ն է, մեծ սուգի օրը համայն հայության, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Այսօր, ամեն հայ մարդ, ուր էլ որ գտնվի երկնքի տակ, մի պահ գոնե հոգևին ծնկի է գալիս 1915 թվականի Մեծ եղեռնի երկու միլիոն լոհերի հիշատակի առաջ և աղոթում նրանց անմեղ հոգիների համար, որոնք անասելի տառապանքների մեջ նահատակի մահով մեռան վասն Հիսուսի և վասն ազատության: Մի դաժան ձեռք քսաներորդ դարի ճակատին արձանագրեց սև տարին առաջին ցեղասպանության:

Նախախնամության անիմանալի մի խորհրդով, քսաներորդ դարի առաջին քսանամյակին, հայ ժողովուրդը ապրեց ողբերգական ճակատագիրը մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի: Ինչպես Աստուծո Որդին խաչվեց ու թաղվեց և երրորդ օրը իր գերեզմանի քարը տապալելով հարություն առավ, մահվամբ մահին հաղթելով հավետ ապրելու համար, այնպես էլ 1915 թվականին ամբողջ մի ժողովուրդ Արևմտյան Հայաստանում խաչվեց ու թաղվեց անօրեն ցեղասպանների ձեռքով և սակայն ուղիղ երեք տարիներ հետո իր գերեզմանի քարը տապալեց և նոր կյանքի կոչվեց 1918-ի Սարդարապատի մայիսյան հաղթանակով ու ապա 1920-ի նոյեմբերյան լուսաբացով, վերջնապես ապահովեց ինքնակամ ու անվտանգ ապրելու իր ճանապարհը, ուր այլևս չկա և չի լինելու սարսափը յաթաղանի:

Հայե՛ր, հոգևոր վալակներ Մեր, այսօր Հայրապետը ձեր, Սուրբ Էջմիածնի Սեղանի առաջ, ծնկաչոք աղոթում է ձեզ հետ մեր ազգի բյուրավոր նահատակների հոգիների համար և ձեզ նման վերանորոգում է իր ուխտը հավատարիմ մնալու նրանց հավատամքին, նրանց երազանքներին, մնալու հավատարիմ վերածնված մեր ժողովրդի արդար իղձերին, մնալու հավատարիմ վերաշինված ու միշտ ծաղկող մեր արդի հայրենիքին, անխտիր բոլոր հայերի հավիտենական Մայր Հայաստանին:

Այսօր ապրիլի 24-ն է: Հայե՛ր, ուր էլ որ լինեք, մի՛ մոռանաք, երբեք մի՛ մոռանաք 1915-ի ցեղասպանության սև տարին, մի՛ մոռանաք հիշատակը մեր անթաղ մեռելների: Մի՛ մոռանաք 1918-ի մայիսյան հաղթանակը և մեծ ավետիսը հայոց հարության: Եվ մի՛ մոռանաք նաև 1920-ի նոյեմբերյան առավոտը՝ մեր հայրենիքի վերջնական փրկության ու խաղաղության:

Լո՛ւյս և օրհնությո՛ւն մեր նահատակներին:

Լո՛ւյս և օրհնությո՛ւն հայրենիք կերտող մեր հերոսներին:

Հավե՛տ կեցցե վերածնված հայ ժողովուրդը: